

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. ՀՀ քաղաքացիություն.
2. բարձրագույն կրթություն.
3. հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի (թանգարանագիտություն կամ սոցիալ-մշակութային գործունեություն՝ թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն) առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

Հիմնական գործառույթները՝

1. իրականացումն է գիտական և մշակութային գործունեություն՝ հիմնված ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

2. իրականացնում է Շիրակի պատմական գավառի պատմությունն արտացոլող պատմության, հոգևոր և նյութական մշակույթի հուշարձանների հայտնաբերման, հավաքագրման, պահպանման, վերականգնման, մշակման, ուսումնասիրման և հասարակությանը մատուցման աշխատանքներ:

3. իրականացնում է գիտահավաքչական, գիտաֆոնդային, գիտացուցադրական, գիտալուսավորական աշխատանքներ և թանգարանագիտական մշակումներ:

4. Մշակում է գիտացուցադրական ծրագրեր, հրապարակման համար կազմում է հատկանշական ցուցակներ, նկարաշարեր:

Իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ (կից ներկայացվում է).
- բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմ(ները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները)), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը).
- երկու գունավոր լուսանկար՝ 3x4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային).
- անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը).
- ինքնակենսագրություն՝ (կից ներկայացվում է).
- գիտական աստիճանի վկայականը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները)), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում.

- աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ), որը կբավարարի սույն հայտարարությամբ սահմանված պահանջներին և հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ.
- օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում.
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման՝ դիմողի կողմից մշակված հայեցակարգը՝ էլեկտրոնային տարբերակով պետք է ներկայացվի 2023 թվականի մայիսի 8-ին:
- հայեցակարգը պետք է լինի առավելագույնը 20 էջ.
- պարունակի պետական կազմակերպության ոլորտի առկա խնդիրների համակարգային վերլուծությունը և գնահատումը.
- ներառի պետական կազմակերպության բնագավառի զարգացման և բարեփոխման առաջարկները.

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2023 թվականի մայիսի 4-ին ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2023 թվականի մայիսի 10-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16):

Հիմնական աշխատավարձը՝ 185902 (հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր երկու) ՀՀ դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը՝ 2023 թվականի փետրվարի 28-ից մինչև 2023 թվականի մարտի 21-ը ներառյալ, տեղեկատու հեռախոս 0312-4-90-00-156, էլեկտրոնային փոստի հասցեն՝ shirak.andznakazm@gmail.com :

Մրցույթի թեստավորման փուլին նախապատրաստվելու համար թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ իրավական ակտերի շրջանակից՝

* Սահմանադրություն

Հոդվածներ՝ 1-8, 10, 13-18, 20, 21, 25, 27, 31, 32, 35-38, 40, 41, 44, 46-49, 57, 58, 64, 66, 70, 72, 73, 103, 118-120, 123, 124, 126, 129, 131, 132, 134, 137, 140, 141, 147, 162, 172, 173

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723>

* ՀՀ աշխատանքային օրենսգիրք

Հոդվածներ՝ 3, 5, 14-16, 23, 30, 45, 76, 99, 100, 101, 103, 109, 111, 112, 123, 124, 132, 139-142, 146, 244, 152-154, 159, 163, 164, 171, 174, 219, 223, 225, 230

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170577>

* «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

Հոդվածներ՝ 3, 4, 6, 7, 9-12, 14-18, 22-24

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164932>

*«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք,
Հոդվածներ՝ 1-3, 6, 8, 10, 14, 16, 17, 20-24, 26
Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121002>

Թեստային հարցերի ձևանմուշ

Մրցույթի հարցազրույցի փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ իրավական ակտերի և հմտությունների շրջանակն է՝

* Սահմանադրություն

Հոդվածներ՝ 1-8, 10, 13-18, 20, 21, 25, 27, 31, 32, 35-38, 40, 41, 44, 46-49, 57, 58, 64, 66, 70, 72, 73, 103, 118-120, 123, 124, 126, 129, 131, 132, 134, 137, 140, 141, 147, 162, 172, 173

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723>

* ՀՀ աշխատանքային օրենսգիրք

Հոդվածներ՝ 3, 5, 14-16, 23, 30, 45, 76, 99, 100, 101, 103, 109, 111, 112, 123, 124, 132, 139-142, 146, 244, 152-154, 159, 163, 164, 171, 174, 219, 223, 225, 230

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170577>

* «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

Հոդվածներ՝ 3, 4, 6, 7, 9-12, 14-18, 22-24

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164932>

*«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք,

Հոդվածներ՝ 1-3, 6, 8, 10, 14, 16, 17, 20-24, 26

Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121002>

*Աշխատակազմի կառավարում

Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf

*Առաջնորդում

Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/2.pdf

*Ռազմավարական պլանավորում

Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/8.pdf

Որոշումների կայացում

Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf

Անձնական որակների՝ աշխատանքային էթիկայի և բարեվարքության կանոնների իմացություն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16), հեռախոսահամար՝ 0312-4-90-00-156:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի նոյեմբերի 18-ի N:625-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ՄԱՐՄՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ՁԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ
ԼՐԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԱՆՍՈՒՇ

Լուսանկար

ՀՀ Շիրակի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանին

.....
ՀՀ Շիրակի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանին

.....
ՀՀ Շիրակի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանին

.....
ՀՀ Շիրակի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանին

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ինդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու

« _____

_____» պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին:

Մրցութին մասնակցելու համար ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. Ինքնակենսագրություն ----- Էջ:
2. Անձնագիր, նույնականացման քարտ -----Էջ:
3. Գուևավոր լուսանկար ----- հատ:
4. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) -----Էջ:
5. Օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) -----Էջ:
6. Գիտական աստիճանի վկայական -----Էջ:
7. Աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ) ----- Էջ:

Սույնով հայտնումեմ, որ.

1) Չեմ դատապարտվել հանցագործության կատարման համար, սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն չունեմ.

2) օրենքի համաձայն չի արգելվել որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ չեմ զրկվել որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) նախորդ 3 տարվա ընթացքում չեմ եղել մասնկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

Նախագծուշացված են՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին

Դիմող՝ _____
թ.

« » _____ 202

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի նոյեմբերի 18-ի N:625-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ՄԱՐՄՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ՁԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ
ԼՐԱՑԿՈՂ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ

Ինքնակենսագրություն

Լուսանկար

Ազգանունը, անունը, հայրանունը	
Ծննդյան ամսաթիվը և տարին, ծննդավայրը	
Կրթությունը	
Մասնագիտությունը	

Որակավորումը	
Գիտական աստիճանը	
Գիտական կոչումը	
Ինչ օտար լեզուների է տիրապետում	
Մասնագիտական վերապատրաստում	
Զինապարտությունը, զինվորական կոչումը	
Անձնագրային տվյալներ («YÓY³·ñÇ ë»ñÇ³Y, Ñ³U³ñÁ, »ñµ ~ áð±Ü ÍáÕÜÇó ¿ ïñí»É)	
Հանրային ծառայության համարանիշ	
Հասցեն (հաշվառման, բնակության)	
Հեռախոսը (բնակարանի, բջջային, աշխատանքային)	
Ընտանեկան դրությունը	

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ ՈՒ Ն Ե Ռ Ի Թ Յ ՈՒ Ն Ը

(սկիզբը) (օր, ամիս, տարի)	-	(ավարտը) (օր, ամիս, տարի)	(հիմնարկի, կազմակերպության անվանումը, պաշտոնը)
	-		
	-		
	-		
	-		
	-		

	-		
	-		

ՇԻՐԱԿԻ
ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»

ՀՀ պետական ռեգիստրի

.....*Գյուլնարու*..... բաժնուն

գ. հ. *29 210 01940*

վ. *03.04.06 0833*

.....*19.06*..... 2003 թ

Պետ. ռեգիստրի Գյուլնարու տարածքային
բաժնի պետ Ս. Խաչատրյան

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Յ. Փիրուսյան Ֆ. Փիրուսյան

.....*09.06*..... 2003 թ



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակի երկրագիտական թանգարանը» (այսուհետև՝ թանգարան) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, թանգարանային ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է: Այն հանդիսանում է «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ձեռնարկության (վկայական N Բ 004056) իրավահաջորդը:

1.2. Թանգարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Թանգարանը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3. Թանգարանը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Այն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ: Կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.4. Թանգարանն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.5. Թանգարանն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.6. Թանգարանը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.7. Թանգարանը Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա գիտական, մշակութային, ուսումնական և գիտամշակութային բնույթի կազմակերպությունների հետ:

1.8. Թանգարանի անվանումն է՝

հայերեն լրիվ. Շիրակի երկրագիտական թանգարան պետական ոչ առևտրային կազմակերպություն.

հայերեն կրճատ՝ Շիրակի երկրագիտական թանգարան

ռուսերեն լրիվ. Государственная некоммерческая организация Краеведческий музей Ширака

ռուսերեն կրճատ Краеведческий музей Ширака

անգլերեն լրիվ Museum Regional of Shirak State non-commercial organization

անգլերեն կրճատ Museum Regional of Shirak.

1.9. Թանգարանի գտնվելու վայրն է ՀՀ Շիրակի մարզ քաղաք Գյումրի, Մյասնիկյան 118.

2. ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Թանգարանի գործունեության առարկան և նպատակը գիտական և մշակութային բնույթի գործունեության իրականացումն է հիմնված ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

2.2. Թանգարանի գործունեության հիմնական նպատակը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը հայ ժողովրդի՝ մասնավորապես Շիրակ պատմական գավառի պատմությունն արտացոլող պատմության, հոգևոր և նյութական մշակույթի հուշարձանների հայտնաբերելը, հավաքելը, պահպանելը, վերականգնելը, մշակելը, ուսումնասիրելը ու հասարակությանը մատուցելն է:

2.3. Թանգարանը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով միայն լիցենզիայի հիման վրա:

3. ԹԱՆԱՐԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. *Գիտահետազոտական աշխատանքների բնագավառում թանգարանը.*

Ուսումնասիրում և գիտական մշակման է ենթարկում հայ ժողովրդի և Շիրակի պատմությունը, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը նյութական և հոգևոր մշակույթի հուշարձաններով:

Կատարում է գիտահավաքչական, գիտաֆոնդային, գիտացուցադրական, գիտալուսավորական աշխատանքներ և թանգարանագիտական մշակումներ:

Մշակում գիտացուցադրական ծրագրեր, հրատարակման համար կազմում հատկանշական ցուցակներ, նկարաշարեր:

Հրավիրում է գիտական նստաշրջաններ, գործարար և գիտական կապեր հաստատում հանրապետության, արտերկրների թանգարանների և գիտամշակութային հաստատությունների հետ:

3.2. *Գիտահավաքչական աշխատանքների բնագավառում թանգարանը՝*

Հատուկ ծրագրերի իրականացման նպատակով թանգարանային ֆոնդ է ընդունում Շիրակի տարածքում հայտնաբերված հնագիտական, դրամագիտական, ազգագրական, վիճագրական, վավերագրական և թանգարանային արժեք ներկայացնող այլ նյութեր, ինչպես նաև պատմական իրադարձությունների ականավոր մասնակիցների, գիտության և մշակույթի հանրաճանաչ գործիչների անձնական իրեր և փաստաթղթեր:

3.3. *Թանգարանային ֆոնդերի հաշվառման և պահպանման աշխատանքների բնագավառում թանգարանը*

Համաձայն գործող կարգի իրականացնում է թանգարանի հիմնական և գիտաօժանդակ ֆոնդերը կազմող արժեքների պետական հաշվառումը և նախնական գիտական մշակումը, թանգարանային առարկայի ակտավորումը, գրանցումը, ծածկագրումը և գիտական գույքագրումը:

Սահմանված կարգով վարում է թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված թանգարանային արժեքների, ինչպես նաև թանգարանում գտնվող դրամանիշերի, մեդալների, շքանշանների հատուկ հաշվառում:

Ապահովում է թանգարանային արժեքների տեղադրումը հատուկ սարքավորված զետեղարաններում, միջոցներ է ձեռնարկում պահպանման ռեժիմի իրականացման ուղղությամբ:

Կանխարգելիչ միջոցներ է ձեռնարկում թանգարանի արժեքների պահպանման, ինչպես նաև վերականգնման կարիք ունեցող նյութերի համար:

Կազմակերպում է ֆոնդերի բաց պահպանում, կազմում տեղեկատու քարտարաններ և կատալոգներ:

3.4. *Գիտացուցադրական աշխատանքների բնագավառում թանգարանը՝*

Թանգարանային ցուցադրությունը կազմակերպում է թանգարանագիտության կողմից մշակված մեթոդական չափանիշերին համապատասխան:

Գիտական խորհրդի երաշխավորություններին համապատասխան մշակում է թեմատիկ ցուցադրության կանխատեսումներ ու իրականացնում դրանք, հարստացնում է ցուցադրությունը նոր ձեռքբերումներով, անհրաժեշտության դեպքում կազմակերպում է թեմատիկ, հորելյանական, շրջիկ ցուցահանդեսներ:

Արտասահմանում ցուցադրումներ կազմակերպելու համար ընտրում է ցուցանմուշներ և սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ ներկայացնում:

3.5. *Մասսայական և գիտալուսավորական աշխատանքների բնագավառում թանգարանը՝*

Ցուցադրությունների շուրջ վարում է էքսկուրսիաներ:

Թանգարանի սրահներում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դրսում, կազմակերպում է դասախոսություններ և զրույցներ, հանդիպումներ, կինոցուցադրումներ և մասսայական բնույթի այլ միջոցառումներ:

Սպասարկման բնագավառում լայնորեն կիրառում է պայմանագրային հիմունքները, հատկապես դպրոցական հասակ ունեցող և ուսանողական տարիքի այցելուների համար, կապեր է հաստատում վերջիններիս հովանավորողների և աջակիցների հետ:

Տարածում է գովազդներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, կատալոգներ, բուկլետներ, մամուլի և տեղեկատվության այլ միջոցների օգնությամբ մասսայականացնում է իր աշխատանքը:

Սահմանված կարգով վարում է այցելուների հաշվառում:

3.6. *Պատճենահանման, լուսանկարահանումների, նկարահանումների, հրատարակչական աշխատանքների բնագավառում թանգարանը՝*

Համաձայն գործող կարգի, առանձին կազմակերպությունների, ինչպես նաև անհատ անձանց պատվերով պայմանագրային կարգով նրանց համար թանգարանային ֆոնդի արժեքներից կատարում է պատճենահանումներ, լուսանկարահանումներ, նկարահանումներ և ստացված հասույթը մուտքագրում է թանգարանի հատուկ հաշվին:

Հրատարակում է գիտական ժողովածուներ, մենագրություններ, գիտական հաշվետվություններ և այլ հրապարակումներ:

3.7. *Գիտական արխիվի բնագավառում թանգարանը՝*

Սահմանված կարգով ապահովում է հիմնական գործունեության հաշվետվությունների, գիտական խորհրդի արձանագրությունների, գիտացուցադրական կանխատեսումների, ավարտված գիտահետազոտական աշխատանքների, ձեռագրերի, ցուցահանդեսների ձևավորման նախագծերի, մեթոդական մշակումների, դասախոսությունների տեքստերի, տպավորությունների, գրքերի, լուսանկարների, գիտական խորհրդի որոշմամբ նաև այլ նյութերի պահպանությունը:

3.8. *Գիտական գրադարանի աշխատանքների բնագավառում թանգարանը՝*

Գիտական գրադարանի աշխատանքներն իրականացվում է գրադարանագիտության պահանջներին համապատասխան:

Նպաստում է հայագիտության և այլ ժողովուրդների պատմության վերաբերյալ, ինչպես նաև գրադարանի հիմնական ֆոնդը կազմող գիտական և այլ կարգի գրականության մասսայականացմանը, կապեր է պահպանում այլ երկրների թանգարանների և գրադարանների հետ:

Բացի թանգարանի աշխատակիցներից, սահմանված կարգով սպասարկում է այլ հաստատությունների գիտական աշխատողների, առանձին հետազոտողների և այլ անձանց:

4. ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Թանգարանի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը՝ ՀՀ Շիրակի մարզպետարանը և տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Շիրակի մարզպետի կողմից, օրենքով սահմանված կարգով:

4.2. Թանգարանի աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ գիտական խորհուրդ, գնահատող-զնոդ հանձնաժողով: Արդյունավետ համագործակցության նպատակով թանգարանում, որպես խորհրդատվական մարմին, կարող են ձևավորվել նաև և այլ խորհուրդներ:

4.3. Հիմնադիրն ունի թանգարանի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.4. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- հաստատության հիմնադրումը
- հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը:
- հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը
- հաստատության վերակազմավորումը և լուծարումը
- հաստատության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը

Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը

4.5. Լիազորված պետական մարմինը՝ Շիրակի մարզպետարանը, իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կառավարման համար:

4.6. Լիազորված պետական մարմինը սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ

կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության գործադիր մարմնի Հայաստանի հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները

վերահսկողություն է իրականացնում հաստատությանը ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար հաստատում է թանգարանի տարեկան հաշվետվությունը և տարեկան հաշվեկշիռը:

5. ՏՆՕՐԵՆԸ

5.1. Թանգարանի տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանա-

տվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պաշտած կատարելու համար:

5.2. առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ

5.3. Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները

5.4. տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր

5.5. աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր

5.6. բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ

5.7. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրաժաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը

5.8. իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար

5.9. վերահսկողություն է իրականացնում նրանց աշխատանքների կազմակերպման, հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ

կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում լիազորված մարմնի հաստատմանը

իրականացնում է Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ

5.10. Տնօրենի բացակայության դեպքում նրան նշանակված մարմնի գրավոր որոշման (իրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Թանգարանի սեփականությունը ձևավորվում է հիմնադրման պետական հիմնարկից պետական կազմակերպության վերակազմավորման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

6.2. Թանգարանի սեփականության առանձին մաս են հանդիսանում թանգարանում պահպանվող պատմամշակութային արժեք հանդիսացող հոգևոր և նյութական մշակույթի առարկաները՝ ցուցանմուշները, որոնք ենթակա են պետական հաշվառման և որպես գույք չունենալով դրամական արժեք հաշվապահական հաշվառման ենթակա չեն:

6.3. Թանգարանում պահպանվող ցուցանմուշների նկատմամբ թանգարանն ունի միանձնյա հեղինակային իրավունք և հիմնադիրը կամ այլ հաստատություն առանց թանգարանի համաձայնության և առաջադրած պայմանների իրավունք չունի տնօրինել՝ օտարել, մշտական կամ ժամանակավոր տրամադրել ցուցանմուշները այլ հաստատությունների, օգտագործել կամ հրատարակել դրանք, կամ դրանց պատկերները ցուցադրական, առևտրային կամ այլ նպատակներով:

6.4. Թանգարանը իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

6.5. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

6.6. Թանգարանի սեփականության պահպանման հոգսը կրում է թանգարանը:

6.7. Թանգարանի սեփականության վրա բռնազանձում կարող է տարածվել միայն դատական կարգով, բացառությամբ պատմամշակութային արժեք հանդիսացող ցուցանմուշների:

6.8. Թանգարանն իրավունք ունի ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ, կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

6.9. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում թանգարանի ստացած եկամուտները թանգարանի սեփականությունն են:

6.10. Թանգարանը Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները:

6.11. Թանգարանը ֆինանսավորում է հիմնադիրը: Թանգարանի ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

6.12. Թանգարանի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
Հայաստանի հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները

Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

6.13. Թանգարանի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

7.1. Թանգարանը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ և Հայաստանի հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Թանգարանը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

7.2. Թանգարանը կարող է լուծարվել Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

